## Արձանագրություն N 2-1

## ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/19 ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լենուղի բնակավայրում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման մնացորդային աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստ

ք. Երևան 19.09.2025թ.
ժամը 10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Եղիազարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Աչոյան
Ա. Ասատրյան
Լ. Մելիքյան
Ա. Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հակոբյան

### 1.Գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

---

( Ա. Եղիազարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել,

բ) գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 2025 թվականի սեպտեմբերի 19-ին, ժամը 10:30-ին,

գ) գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

ՀՀ դրամ

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնման գին | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | «ՊՐՈ ՇԻՆ» ՍՊԸ, «ՀԷՄ» ՍՊԸ և «Վեհ Իշխանասար» ՍՊԸ կոնսորցիում | **372 821 336** | 341 750 000 | 68 350 000 | 410 100 000 |

Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

### 2. Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ. հասցեն

---

( Ա. Եղիազարյան)

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գործունեության հասցե | Կապի միջոց | Էլեկտրոնային փոստի հասցե |
|---|---|---|---|---|
| 1 | «ՊՐՈ ՇԻՆ» ՍՊԸ, «ՀԷՄ» ՍՊԸ և «Վեհ Իշխանասար» ՍՊԸ կոնսորցիում | ք. Երևան, Հրաչյա Քոչար փ. 2/1<br>ք. Երևան, Արին Բերդի 12<br>Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Կամո 22 | 041 22 18 78<br>055 50 40 02<br>077 41 12 29 | proshingnumner@mail.ru,<br>info@hemon.am,<br>afoyan73@mail.ru |

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

**3. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին**

------------------------------------------------------------------------------------------------

( Ա. Եղիազարյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ և հրավերի 8.21 կետերը՝ մասնակցի կողմից ներկայացված տվյալների իսկությունը ստուգելու նպատակով գնահատող հանձնաժողովը որոշեց հարցում կատարել՝

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ վերջինիս կողմից վերահսկվող եկամուտների գծով 500 000 ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չունենալու մասին,

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն միջին շրջանառությունը գնման գնի 100 տոկոսից պակաս չլինելու մասին,

3. Առողջապահության և ԿԳՄՍ նախարարություններ, Քաղաքաշինության կոմիտե և ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամ, հայտը ներկայացնելու տարվան նախորդող 3 տարիների ընթացքում 5 000 000 ՀՀ դրամի չափով նախկին պայմանագրային պարտավորությունների ընթացքում պատվիրատուի կողմից սահմանված տույժ և (կամ) տուգանք չունենալու մասին:

3.2 Հայտերի գնահատման նիստը հրավիրել իրավասու մարմինների կողմից եզրակացությունները ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:30-ին, ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ________________________ Ա. Եղիազարյան

Անդամ՝ ________________________ Ա. Աչոյան

________________________ Ա. Ասատրյան

________________________ Լ. Մելիքյան

________________________ Ա. Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ________________________ Գ. Հակոբյան